12943

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«17» 11 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 265 - 25

Նախաձեռնող՝ ***Քաղաքացի Վիկտոր Տեր-Հովսեփյան***
ք. Երևան, Մոսկովյան փողոց 8

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Անտառային փողոց 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում***

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 265 - 25
«17» Հոկտեմբերի 2025թ.

Երևան քաղաքի Անտառային փողոց 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող	Քաղաքացի Վիկտոր Տեր-Հովսեփյան
Փաստաթղթի տեսակը	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) և նախագծային փաստաթղթի՝ քաղաքացի Վիկտոր Տեր-Հովսեփյանի կողմից Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում նախատեսվում է բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում (այսուհետ՝ Համալիր):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան համայնքի կողմից տրամադրված 2023 թ. փետրվարի 2-ի N 01/18-07/1-Դ-4037-81 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 0.523 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ N01-006-0001-0456), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման է:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում: Համաձայն Հաշվետվության տարածքը կառուցապատված չէ, սակայն տարածքում առկա են նախկինում ստացված քաղաքաշինական փաստաթղթերի հիմքով իրականացված շենքի հիմքեր, կիսակառույց, որը նախատեսվում է ապամոնտաժել:

Համաձայն դիտարկվող տարածքում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացության՝ գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Քանաքեռ Արաբկիրի լավային սարահարթի վրա: Գրունտային ջրերը մինչև 30.0 մետր խորության վրա չեն բացահայտվել: Գրունտային ջրերի մեծ խորությունների վրա գտնվելու հանգամանքը պայմանավորված է բազալտների բարձր ճեղքավորվածությամբ և հրաբխային խարամի բարձր ֆիլտրացիայով: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքում բնության և (կամ) պատմամշակութային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ չկան: Հարևանությամբ գտնվում են բնակելի, հասարակական շենք շինություններ, պատմամաշակութային հուշարձաններ՝ Կասկադ հուշահամալիրը (հողմասի սահմնագծից 50.56 մ) և Շառլ Ազնավուրի տունը (հեռավորությունը նախատեսվող կառույցից 12.2 մ):

Համալիրի կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- ✓ հողամասի ընդհանուր մակերես – 5236,8 քմ,
- ✓ Կառուցապատման մակերես – 2326,1 քմ / 44.4 %/,
- ✓ Կանաչապատման մակերես – 2216,9 քմ /42.3 %/,
- ✓ Ճանապարհ, մայթ, ճեմուղի – 693,8 քմ /13.3 % /;
- ✓ Շինարարական ծավալ – 65295.9 քմ;
- ✓ Բնակարանների քանակ 78;
- ✓ Ավտոկայանատաեղեր 106; հավելյալ 4 մեքենայատեղի հնարավորությամբ:

Համալիրն իրենից ներկայացնում է 4 հարկանի 4 աշտարակ, միացված մեկ ընդհանուր հիմքով, որի մեծ մասը ստորգետյա է: 0.00 նիշն ընտրված է 1054.50 մ: Այս նիշից վեր կառույցն ունենալու է 3-4 հարկ, իսկ նիշից ցած՝ 4 հարկ: Վերին նիշը 16.6 մ է: Բարդ ռելիեֆից ելնելով շենքում բնակելի տարածքները սկսվում են - 5 հարկից: Հասարակական կոմերցիոն տարածքները գտնվում են -4, -3, -2 և 1-ին հարկերում: Ավտոկայանատեղիի մուտքն ու ելքը իրականացվելու է 2 հատվածից՝ համապատասխանաբար -4 և -1 հարկերից, որոնք միմիանց միանալու են շրջանաձև թեքահարթակով: Բակը գտնվելու է -4 հարկի մակարդակով, -15.00 նիշի վրա: Ավտոմեքենաների մուտքը դեպի բակ արգելվելու է: Բակում առկա է լինելու սալարկված ճանապարհ, որը հնարավոր է օգտագործել միայն արտակարգ իրավիճակներում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գլխավոր մուտքերը նախատեսված են +0.00 (1084.00) և -15.00(1069.00) նիշերից: Ավտոկայանատեղին -18.60 նիշում երկակի նշանակության է և արտակարգ իրավիճակներում ծառայելու է նաև որպես պարզագույն թաքստոց: Շինարարության և շահագործման փուլերում տարածքի ճանապարհային պայմաններն ապահովվելու են Անտառային փողոցից:

Աստիճանավանդակների դռները նախատեսված են հակահրդեհային և ինքնափակվող:

Օբյեկտի ջերմամատակարարումն իրականացվում է 4 կաթսայատներից, որոնք գտնվում են «Ա», «Բ», «Գ» և «Դ» շենքերի տանիքների ծածկի վրա, յուրաքանչյուրը 25.3 քմ մակերեսով, 230 կՎտ հզորությամբ գազային հատակային կաթսաներ: Որպես ջեռուցման հաղորդիչ օգտագործվելու է ջուր 80-60°C պարամետրով: Կաթսայատները նախատեսված են շենքերի ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովման համար:

Համալիրի գազաֆիկացումը Q=250 խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել 430 մ հեռավորության վրա գտնվող կողմնատար գազատարից:

Համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը կիրականացվի մոտ 100 մ հեռավորությամբ գտնվող D=300 մմ ջրատարից, ջրահեռացումը՝ տարածքի հարևանությամբ գտնվող կոյուղատարից D=400մմ կոյուղատարին, հեղեղատարը՝ տարածքով հարևանությամբ D=400մմ հեղեղատարին:

Շինությունն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով:

Համալիրի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 4 ամիս քանդման աշխատանքերի իրականացման համար և 48 ամիս շինարարական աշխատանքների համար: Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարման և ջրամատակարարման ապահովում, շիններության և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում և այլն:

Շինարարական աշխատանքները միաժամանակ իրականացվելու են 3500 քմ մակերեսի վրա: Տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են վերամբարձ կռունկ, բեռնատար ավտոբետոնախառնիչ և ինքնաթափ, բուլդոզեր, ձեռքի մեխանիկական գործիքներ, ատաղձագործական և ներկակարարական գործիքներ և այլն: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու են շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում՝ հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, երեսպատման քարեր, նյութեր և այլն: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում տեղադրվելու են տակդիրների վրա՝ չգերազանցելով բարձրության նորմերը, սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական մասնագիտացված ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը շինհրապարակ է տեղափոխվելու պատրաստի վիճակում Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Եղանակային տեղումներից և անիվների լվացումից առաջացած հոսքաջրերն ուղղվելու են տարածքում նախատեսվող պարզարան, որոնք տեղադրվելու են շինհրապարակին կից ցածրադիր հատվածներում (2 հատ 100 խմ ծավալով տարողություններ): Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրն օգտագործվելու է կրկնակի, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Աղմուկի հիմնական աղբյուր է հանդիսանում շինաշխատանքների ժամանակ օգտագործվող շինտեխնիկան: Համաձայն ներկայացված հաշվարկների՝ աղմուկի մակարդակը գտնվելու է թույլատրելի նորմայի սահմանները:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում Համալիրի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Աշխատողների կոմունալ-կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովելով շինհրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները և այլն: Տարածքում նախատեսվում է 100 աշխատողի համար տեղադրել 10 բիոզուգարան: Բիոզուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները, վերացնում է միկրոբներին և չեզոքացնում հոտերը: Բիոզուգարանները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են մատակարար ընկերության կողմից:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման, անիվների լվացման, անհրաժեշտության դեպքում՝ հրդեհաշիջման համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 20750 խմ/շին. ժամ: Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի

կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 14250 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող ամբողջ զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված վայր, հետագայում հետլիցքքի չափով գրունտը նորից կբերվի: Հողային աշխատանքների ընթացքում կիրառվելու է րցան թնդանոթ:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է ամսեկան մեկ մարդու հաշվարկով 6 կգ 6x100x48/1000= 28.8 տ և շինարարական աղբն է մոտ 430 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Առաջացող թափոնները հավաքվելու են աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու են տարածքից՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ տարածքում բացառելով աղբի կուտակումը և այրումը: Շենքերի շահագործման ընթացքում առաջացող կենցաղային աղբը կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, տարածքի բարեկարգում, ճանապարհի ասֆալտապատում և կանաչապատում: Իրականացվելու է 2216.9 քմ (42.33 %) մակերեսով կանաչապատում: Համաձայն հաստատված կանաչապատման նախագծի՝ տարածքում նախատեսվում է տնկել Տոսախ մշտադալարգնդաձև (6 հատ), Կատալպա բիգնոնիանման (19 հատ), Հուդայածառ Կանադական (4 հատ), Իլենի գնդաձև շտամբի վրա (18 հատ), Դրախտավարդ (1 հատ), Գիհի Կազակական (24 հատ), Մագնոլիա սուլանժի (2 հատ), Եղևնի գնդաձև (3 հատ), Սոչի ղրիմյան (5 հատ), Սոսի արևելյան (5 հատ): Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 200 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող քաղաքային ոռոգման ցանցից՝ կաթիլային եղանակով՝ Երևան ՋՕԸ հետ համապատասխան պայմանագիր կնքելով:

Նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու, մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումներ: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ (Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, աղմուկի և թրթռումների, կենսաբազմազանության չափումներ և այլն):

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար հատկացվող ընդհանուր ծախսը կազմում է 2.720.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Փորձաքննական գործընթացին

մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, Կենտրոն վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել Հաշվետվության լրամշամական գործընթացում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել է երկու հանրային լսում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից ևս արժանացել է հավանության:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննության գործընթացում համաձայն քաղաքաշինության և կադաստրի կոմիտեների կողմից ներկայացված կարծիքների՝ գործող կադաստրային քարտեզում և իրավունքի պետական գրանցման վկայականում առկա է հողամասի մակերեսի (0.545629 հա), ուրվագծի ու գծային չափերի անհամապատասխանություն, ինչն անհրաժեշտ է վերջնական ճշտել պետական համալիր փորձաքննության ժամանակ:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պետական համալիր փորձաքննության ներկայացնել վերջնական ճշտված նախագծային փաստաթղթերը:
2. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
3. Շենքերի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
4. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայն Երևանի քաղաքապետարան ներկայացված և հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի՝ պահպանելով նշված 2216,9 քմ (42.33 %) կանաչապատման մակերեսը, կանաչապատման և բարեկարգման լուծումները:
5. Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է ապահովել ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի հարցերը: Շինարարական աշխատանքները կատարել՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը, փոշու արտանետումները, ճանապարհների բեռնվածությունը, հատկապես հողային հանույթի տեղափոխումը կազմակերպելիս:
6. Բետոնի տեղափոխումն իրականացնել Հաշվետվությամբ նախատեսված ձևով՝ բացառելով շինհրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

7. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
8. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Վիկտոր Տեր-Հովսեփյանի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական դրական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան